

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԹԱՂԱՎԱՐԴԵՑԻ ԳՐԻԳՈՐ ՔՀ. ԴԱՎԹԱՆՑԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Առաքել Բաբախանյանը (Լեո) «Արձագանք» շաբաթաթերթի 1885 թվականի № 9-ում հրապարակած իր «Մի քանի հնություններ» հոդվածում խոսելով ժողովրդի ծոցից դուրս եկած այն հասարակ մարդկանց մասին, որոնք սրբությամբ են պահպանում անցյալից ժառանգած հոգևոր մշակույթի մասունքները, գրում է. «դոցանից մեկն է եղել և թաղավարդեցի Գրիգոր քահանա Դաղյանցը, որ վախճանյալ է մի քանի ամիս սրանից առաջ Շուշիում, թողնելով յուր Սմբատ և Վահան որդիներին հին ձեռագրերի մի հարուստ ժողովածու (մինչև 33 հատ)»:

Իր հոդվածում Լեոն հատկապես կանգ է առել այդ 33 ձեռագրերից առավել արժեքավոր 13-ի վրա և 1—13 թվահամարների ներքո տվել դրանց համառոտ նկարագրությունը, իսկ մյուսների մասին բավարարվել է արձանագրելով. «նաև 20 հատ ուրիշ գրքեր, որոնք հիշատակարան չունին, բոլորը հին, մագաղաթի վերա գրած. դոցա մեջ տեսա մի քանի հատ քերականություն»:

Արդ, ի՞նչ եղան այդ ձեռագրերը:

Քանի որ Լեոն այդ ձեռագրերը բաժանել է երկու որոշակի խմբերի, մի խումբը նկարագրել, իսկ մյուսը՝ ոչ, ուստի անդրադառնանք այդ խմբերից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Ա. **Նկարագրված ձեռագրեր.**—Ինչպես ասվեց, Լեոն այդ 33 ձեռագրերից ավելի հանգամանալի նկարագրել է միայն 13-ը: Ստուգումները ցույց են տալիս , որ այդ 13 ձեռագրերից 12-ը (№№ 1, 3—13) մտել են Խաչիկ վրդ. Դաղյանի հայտնի հավաքածուի մեջ և արձանագրված են Հակոբ Թոփճյանի կազմած ցուցակում, իսկ մեկը (№ 2 «Մաշտոց, գրած հայոց ՌՃԺԵ (1666) թուին Օղնաբերդ գիւղի մէջ», որի ուր գտնվելը, ի միջի այլոց, մեզ հայտնի չէ, այդ ցուցակում չի արտացոլված: Այդ 12 ձեռագրերը 1903 թվականին Խաչիկ վրդ. Դաղյանի հարուստ հավաքածուի կազմում մուտք են գործել Էջմիածին, իսկ այժմ գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս հին և նոր թվահամարների կից տախտակը):

Բ. **Չնկարագրված ձեռագրեր.**—Ըստ Լեոյի, բացի նկարագրված վերոհիշյալ 13 ձեռագրերից, եղել են նաև 20 այլ ձեռագրեր: Անտարակուսելի է, որ ինչպես նախորդները, այնպես և վերջիններս պետք է ժառանգած լինի Խաչիկ վրդ. Դաղյանը՝ Գր. քհ. Դաղյանցի Վահան որդին, մանավանդ, որ դրա մասին կա Լեոյի պարզորոշ վկայությունը: Հետևապես, չնկարագրված վերոհիշյալ 20 ձեռագրերը պետք է փնտրել ոչ այլ ուր, քան Թոփճյանի նկարագրած ձեռագրերի շարքում:

Փորձենք փնտրել:

ա) Ըստ Լեոյի, չնկարագրված 20 ձեռագրերի մեջ կային «մի քանի հատ քերականություն»: Ուշադրություն դարձնենք, որ քերականական ձեռագրերի քանակը եղել է ոչ թե մեկ կամ երկու, այլ՝ «մի քանի հատ», այսինքն առնվազն երեք, կամ նույնիսկ ավելի: Թոփճյանի ցուցակում այդպիսիների

թիվը հասնում է 4-ի (№№ 91, 92, 92ա, 93)։ Պետք է կարծել, որ այդ 4 ձեռագրերը Լեոյի հիշատակված ձեռագրերն են։

բ) Ըստ Լեոյի, չնկարագրված ձեռագրերը գրված են՝ «մագաղաթի վերա»։ Եթե Լեոյի ասածը բառացի չհասկանանք, այլ՝ որ այդ ձեռագրերի մեջ մեծ թիվ են կազմել մագաղաթյա ձեռագրերը, ապա կարող ենք ասել, որ Խաչիկ Դաղյանի հավաքածուի մեջ եղած 12 մագաղաթյա ձեռագրերից առնվազն 10-ը (№№ 3, 4, 6, 8, 11, 15, 18, 19, 25, 53) Լեոյի հիշատակած «մագաղաթի վերա գրած» ձեռագրերն են։ Մագաղաթյա մյուս երկու (№№ 12, 37) ձեռագրերը բացառվում են, որովհետև առաջինը (№ 12) մտնում է նկարագրված 13 ձեռագրերի թվաքանակի մեջ (№ 7), իսկ երկրորդը (№ 37) Շաղաթի ձեռագրերից է, որտեղից Խաչիկ Դաղյանն է վերցրել անձամբ։ Որպես հավելյալ փաստարկ նշենք, որ մագաղաթյա այդ 10 ձեռագրերից երկուսը (№№ 6, 8) Տեր Գրիգորի այրին՝ տիրուհի Հյուրիզադ Դաղյանցը 1897 թվականին, որպես աջահամբույր, նվիրել է Խրիմյան Հայրիկին։ Հավատացյալ տիրուհին ո՞ւմ ձեռագրերը պիտի նվիրեր, եթե ոչ իր հանգուցյալ ամուսնու։

գ) Խաչիկ Դաղյանի հավաքածուի ձեռագրերից երկուսի վրա (№№ 26, 78) եղած հիշատակագրությունները ու կնքադրոշմները հուշում են, որ այդ ձեռագրերը սկսած 1793 թվականից մինչև 1885 թվականը, այսինքն մինչև Գր. քհ. Դաղյանցի մահը, եղել են Շուշիում։ Բացառված չէ, որ ծընունդների վերաբերյալ եղած գրառումներն էլ կատարված լինեն Տեր Գրիգորի ձեռքով։ Հետևապես կարելի է ենթադրել, որ այդ երկու ձեռագրերը նույնպես Լեոյի հիշատակած 20 ձեռագրերից լինեն։

դ) 1897 թվականին Խաչիկ վրդ. Դաղյանը 4 ձեռագիր է նվիրաբերել, մեկը (№ 7) անձամբ Խրիմյան Հայրիկին, իսկ 3-ը՝ (№№ 60, 80, 81)՝ Մայր Աթոռի Մատենադարանին։ Թեև առանձին փաստարկներ չկան, բայց կարծում ենք, որ դրանք ևս Լեոյի հիշատակած ձեռագրերից պետք է լինեն։ Այստեղ ուշադրության է արժանի այն պարագան, որ ինչպես տիրուհի Հյուրիզադի, այնպես և Խաչիկ Դաղյանի նվիրատվությունները կատարված են միաժամանակ։

Ամփոփենք։

Ելնելով շարադրվածից, որոշ վերապահությամբ, կարող ենք ասել, որ Լեոյի հիշատակած բայց չնկարագրված 20 ձեռագրերը (որոնք հետ այսու կնշվեն աստղանիշ ունեցող 14—33 թվահամարներով՝ որպես նախորդ 1—13 թվահամարների շարունակություն) ամբողջությամբ մտել են Խաչիկ Դաղյանի հավաքածուի մեջ և Հակոբ Թոփճյանի ցուցակում արձանագրված են 3, 4, 6, 7, 8, 11, 15, 18, 19, 25, 26, 53, 60, 78, 80, 81, 91, 92, 92ա, 93 թվահամարների տակ։

Նշված ձեռագրերից. 6-ը (№№ 6, 7, 8, 60, 80, 81) Մատենադարան են մուտք գործել 1897 թվականին և մտել «Գևորգյան» կոչվող հավաքածուի մեջ, իսկ մնացած 14-ը (№№ 3, 4, 11, 15, 18, 19, 25, 26, 53, 78, 91, 92, 92ա, 93)՝ 1903 և այժմ պահվում են հետևյալ թվահամարների ներքո (տե՛ս հին ու նոր թվահամարների կից տախտակը)։

Համեմատական տախտակ

Թաղավարդեցի Գրիգոր քհ. Դաղյանցի ձեռագրերի հին և նոր թվահամարների

Լեո	Թոփճյան	Գևորգյան	Մատենադարան	Լեո	Թոփճյան	Գևորգյան	Մատենադարան
1	27	—	3668	18	8	967	3259
2	—	—	—	19	11	—	3662
3	32	—	3872	20	15	—	3663
4	31	—	3671	21	18	—	3664
5	23	—	3871	22	19	—	4304
6	54	—	3876	23	25	—	3666
7	12	—	3943	24	26	—	3667
8	70	—	3678	25	53	—	3952
9	77	—	3681	26	60	1029	3159
10	52	—	4119	27	78	—	3965
11	62	—	4120	28	80	615	2559
12	63ա	—	3957	29	81	633	2561
13	47	—	3874	30	91	—	3883
14	3	—	4321	31	92	—	3451
15	4	—	3660	32	92ա	—	3967
16	6	362	3784	33	93	—	3685
17	7	897	2582				

* **Հակոբ Թոփճյան**, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898։